

«Համիտիէ գունդերը չի կրնար ըսուիլ որ բարեկարգութեան նպատած ըլլան, ընդհակառակն քիւրդերը հիմա իրենց յափշտակութիւնը և կողոպուտը իրաւունքի երեւոյթին ներքեւ կը շարունակեն. և ուր որ քրիստոնեաները չեն կրնար կողոպտուիլ, անոնց անդ զոր օրինակ Մուսուլի վիլայէթին մէջ մահմետականները կը հարստահարուին:»

Կը նկարագրէ հարստահարութեանց դէպքերը:

Թիւրք կառավարութիւնը Համիտիէ գունդերը ստեղծելով՝ ուղեց իրեն անձնուէր մարդիկներ ունենալ, ասոնք կառավարութեան միւս գօրքերուն հետ կապ չունին. սիսիպլիճի և կամ զինուորական կրթութեան և ոչ խօսք կրնայ ըլլալ, ընդհանրապէս ուղածնին կ'ընեն. ասկէ կը հետեի որ կառավարութիւնը, իր այսօրուայ պէտքերուն համար ամենին չի համարձակիր՝ Համիտիէ գունդերը իւր երկրին ուրիշ մասերը զրկել, զոր օրինակ Ելմէն կամ Մակեդոնիա:

Այս համիտիէ գունդերը քանի որ կարգ կանոն և որոշ գործունէութիւն մը չունին, խաղաղ բնակիչներուն զարհուրանք և սարսափ եղած են. ասոնք Սուլթան Համիտի grenadier գունդերն են, և որու համար պէտք չունին իրենց հացը աշխատելու. բայց ինչո՞ւ ապրիլ. թոշակի խօսք անգամ չըկայ. ուստի պէտք են յափշտակել, և որմէ՞ պէտք է յափշտակեն, եթէ ոչ Հայերէն: Այսպէսով յառաջ եկաւ կատարեալ յափշտակութեան սիստէմ մը:»

Կը նկարագրէ տնտեսական փճացումները, կառավարական ֆինանսի կրած հարուածը և այլն, որը աւելորդ կը համարենք տեղիս համար առաջ բերելու:»

Տօքա. Լէփսիուսի Տէր Քրիստոյիսէ Օրիէնդ (Քրիստոնէական Արեւելք) ամսագիրքի մէջ նոյնպէս կը կարդանք (հրատարակուած Պերլին. 1900. մարտ-ապրիլ):

Նկարագրելով Մոլդփէի տեսութիւնները քրդական ապրտամբութեան և կառավարութեան ձեռք առած միջոցներու վրայ՝ կ'ըսէ: